



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 27 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2014

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 53

ՄԱՐԴՈՒՆ ԱՆՄՏՈՒԹԻՒՆԸ

Անմիտ մարդիկ իրենց մտքին մէջ ըսին.-«Աստուած չկայ», ուստի ապականեցան, եւ զգուելի մեղքեր գործեցին. չկայ մէկը որ բարին գործէ:

Աստուած երկինքէն կը նայի մարդոց,

տեսնելու համար՝ թէ կա՞յ իմաստուն մարդ մը, որ Աստուծոյ կը դառնայ:

Ամէնքն ալ մոլորեցան եւ մոլութեանց գիրկը ինկան.

չկայ մէկը որ բարին գործէ, չկայ մէկը, ոչ իսկ մէկ հոգի:

Երբեք խելքի պիտի չգա՞ն անոնք՝ որոնք իմ ժողովուրդս կ'ուտեն,

հացի պէս, եւ Աստուծոյ չեն աղօթեր:

Բայց յանկարծակի ահ ու դողի պիտի մատնուին.

ահ ու դողի մը՝ որուն նմանը չէ եղած երբեք.

որովհետեւ Աստուած ցիր ու ցան պիտի ընէ քեզ պաշարողներուն ոսկորները,

եւ դուն զանոնք անօթահար պիտի ձգես,

որովհետեւ Աստուած մերժեց զանոնք:

Ոհ տեսնէի՜ Աստուծոյ ժողովուրդին փրկութիւնը, որ Սիոնէն պիտի գայ:

Երբ Աստուած ետ դարձնէ գերի տարուած իր ժողովուրդը,

Յակոբի սերունդները պիտի ցնծան եւ ուրախանան:

ՆԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,

Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՊՈԹՔ

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻՒԹԸ



ԵԼԻՅ Է.- Ժ ԳԼՈՒԽՆԵՐ



ՄԱՏՈՒԾՈՑ ՀՐԱՄԱՆԸ ՄՈՎԱԷՄԻՆ ԵՒ ԱՀԱՐՈՆԻՆ (7 գլխ)

Եօթներորդ գլուխէն սկսեալ յաճախ Տէրը յանկարգի պէս կը կրկնէ՝ «Ես եմ Տէրը», ցոյց փալու համար իր բացարձակութիւնը եւ գերակայութիւնը ամբողջ փիեզերքի վրայ, ոչ միայն իր ժողովուրդին, այլ նաեւ եգիպտացիներուն: Տիրոջ իսկական նպատակը Ինքզինք յայտնելն է, եւ նշանները առհասարակ հեթանոսներուն եւ անհաւաքներուն համար են (Ա Կորնթ 1:22, համեմար 14:21,22): Հերեւաբար, Աստուծոյ փալիք նշանները ոչ միայն իր ժողովուրդը հաւաքի մէջ ամրապնդելու համար էր, այլ՝ նաեւ եգիպտացիները դարձի բերելու համար, որպէսզի զգային Եհովա Աստուծոյ գերակայութիւնը իրենց կարծեցեալ աստուածներուն վրայ:

«Ես Փարաւոնին սիրտը պիտի խաբացնեմ»: Տարօրինակ արտայայտութիւն մըն է եթէ երբեք ճշգրիտ չհասկնանք: Կարգ մը փեղեկու մէջ այլ կերպ պիտի արտայայտուի. «Փարաւոն իր սիրտը խաբացուց»: Կարծէք զիրար հակասող բացատրութիւններ են: Խորքին մէջ Աստուած Ինք չէ Փարաւոնին սիրտը կարծրացնողը: Աստուած երբեք մարդոց ազատութեան մէջ ուրնձգութիւն չ'ընէր, բայց կարծէք Աստուած Ինք եւս իր հաւանութիւնը կու փայ որպէսզի Փարաւոն իր սիրտը կարծրացնէ, որպէսզի իր նպատակին ծառայէ, ինչպէս որ Աստուած չի կամենար որ մարդ մեղք գործէ, եւ սակայն, յաճախ կ'արօտնէ այդ մէկը, եւ ապա այդ գործած չարիքէն Աստուած բարիք դուրս կը բերէ: Միւս կողմէ, նաեւ ձեռով մը ցոյց փալու, թէ որքան կարծր է սիրտը արդէն Փարաւոնին: Ամէն պարագայի, երկու բան կայ որոնց մարդկային միտքը անկարող է ամբողջականօրէն ըմբռնելու:

1. Աստուծոյ կամքը
2. Մարդու ազատութիւնը

Մենք գիտենք որ մարդը կը գործէ ամբողջական ազատութեամբ, Աստուած ո՛չ ուղղակի եւ ո՛չ ալ անուղղակիօրէն կը միջամարտ մարդուն ազատ կամքին մէջ, բայց Աստուած կը փեսնէ մարդուն արարքներուն հետեւանքները, բան մը որ մեզի համար դժուար է կանխապես տեսլ, մասնաւորաբար հեռու ապագային կատարած հարցերու պարագային, եւ այս իսկ պարզառով, Աստուած կ'արօտնէ մարդուն սխալներ գործելու, որովհետեւ արդր երին Ան բարիք մը կը փեսնէ ի շահ մարդուն դարձեալ: Տարօրինակ կրնայ ըլլալ բացատրութիւնը, բայց այս է խորհուրդը, ու մանաւանդ Աստուծոյ գործելակերպը, որ փարբեր է մարդու գործելակերպէն ու մրաձեւակերպէն:

Ուստի, Փարաւոնին սրտի խաբացումը առիթ պիտի ծառայէ նախ Աստուծոյ ժողովուրդին փրկութեան, եւ երկրորդ՝ Աստուծոյ կարարած հրաշքներն ու Աստուծոյ փառքը ցոյց փալու: Հերեւաբար երբ կ'ըսէ. «Ես պիտի կարծրացնեմ Փարաւոնին սիրտը», ըսել կ'ուզէ թէ Ինք հաւանութիւնը կու փայ արիկա փեղի ունենալու, եւ ոչ թէ Աստուած Ինք անձամբ պիտի միջամարտ Փարաւոնին ներաշխարհին մէջ եւ սրտի որ ան ակամայ դէմ կենայ Մովսէսի առաջարկին, որովհետեւ այս պարագային Աստուած Ինքզինք հակասած պիտի ըլլար. Ինքն էր Մովսէսը դրկողը, եւ Ինք անոր արգելք հանդիսացող պիտի ըլլար:

ՏԱՍԸ ՀԱՐՈՒՄՆԵՐԸ (8-10 գլխ)

Այս հարուածներով Աստուած Իր գործութիւնը եւ գերակայութիւնը ցոյց կու փայ Եգիպտոսի աստուածներուն վրայ: Այդ հարուածներն են՝ արիւն, գորպ, մուկ, շնաճանճ, անասուններու մահ, ուռեցքներ, կարկուտ, մարախ, շոշափելի խաւար, անդրանիկներու մահը:

Այս 10 հարուածները որոշ փրամաբանական կարգով մը կը փրուին, եւ անոնց մէջ յատուկ ընթացք մը կայ որով Աստուած բան մը ըսել կ'ուզէ: Հերաբրքրականօրէն երեք խումբերու բաժնուած:

Երեք անգամներ Մովսէսը Փարաւոնին կը ներկայանայ ոչ թէ պալապին մէջ, այլ՝ «երբ որ ան դէպի ջուրը կ'ելլէր», հաւանաբար պաշտամունքի համար, որովհետեւ Նեղոս գետը Եգիպտոսի ոռոգման միակ աղբիւրն էր, որպէս աստուած: Իսկ հարուածներու պարագային աստիճանական զօրացում մը կայ, որուն ամենավերջինը ծանրն է՝ անդրանիկներու մահը:

Միս կողմէ, հարուածներուն առաջինները բոլորն ալ երկրին վրայ կը կիրարկուին, մինչ չորրորդէն սկսեալ Աստուած գափորոշում կը դնէ Իսրայէլի եւ Եգիպտոսի միջեւ: Աստուած այս հարուածներով Իր ամենագործութիւնը ցոյց կու տայ եւ առաջին հարուածը Նեղոսին, ցոյց տալու համար, թէ անիկա աստուած չէ: Այս հարուածներուն դիմաց Եգիպտոսի մոզերն ալ սկիզբը կը յաջողին իրենք եւս հրաշքներ ընելու, սակայն կախարդական եւ դիւային ազդեցութեան տակ, որուն մէջ կարելի է տեսնել մարդկային հոգեկան կարողութիւնը եւ Չարին ներգործութիւնը: Եւ ահա կարծէք մրցակցութիւն մըն է որ տեղի կ'ունենայ: Բայց այս մրցակցութիւնը մինչեւ որոշ տեղ մը, որովհետեւ երրորդ հարուածին արդէն մոզերը կ'ըսեն. «**Աստուծոյ մատը կայ ասոր մէջ**»: Այս արտայայտութիւնը արդէն պարտութիւն կը նշանակէ:

Մէկ բան որոշ է, որ այս պատիժներու տեսարանը ջարագովական նշանակութիւն ունի: Աստուած կ'ուզէ ցոյց տալ, որ ամենափոքր արարածովն իսկ կրնայ յաղթել չարին: Աստուած նաեւ կ'օգտագործէ բնական ու բնութեան երեւոյթները Իր գործութիւնը ցոյց տալու համար: